

ՉԲԱՌԱՐԱՆԱԳՐՎԱԾ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ ԳՈՐԻՄԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Մարգարյան Ինգա

ՀՀ ԳԱԱ լեզվի իստիտուտ

DOI: 10.54503/978-9939-970-08-0-131

Ուսումնասիրվող բարբառային դարձվածքները Գորիսի բարբառախոս միջավայրում տարածված, բարբառային բառարաններում չվկայված հետաքրքրական կառույցներ են: Դրանցից անվանական ձևերը քանակով զիջում են բայական դարձվածքներին: Առավել տարածված են **անել** բայի հարակատարով կայունացած և իմաստային յուրահատուկ նրբիմաստներ արտահայտող բայական դարձվածքները: Նյութի ուսումնասիրությունը համեմատական քննությամբ հնարավոր դարձրեց զուգադրել և վերլուծել Գորիսի բարբառում և Արցախի բարբառ-խոսվածքներում վկայվող դարձվածային միավորների ընդհանրությունները՝ միննույն ժամանակ ընդգծելով Գորիսի՝ որպես առանձին բարբառում կայունացած դարձվածքների իմաստաբանական ու ձևակազմական ինքնատիպ դրսևորումները: Գորիսի բարբառի դարձվածքները քաղել, հավաքել ենք կենդանի խոսքից, դիտարկել դրանց ընկալումն ու ամրագրումը խոսքաշարում: Ուսումնասիրել ենք հիմնականում մարդու արտաքին ու ներքին նկարագրությունը, բնավորության գծերն ու ընդհանրական հատկանիշները, կենցաղային իրողությունները բնորոշող դարձվածային միավորներ:

Մուտք

Լեզվական համակարգում դարձվածային միավորի կարևորագույն գործառնություններից են մարդու կենսագործունեությունը բնութագրող, նրա իմացական ու ճանաչողական ոլորտները բացահայտող տեղեկույթի կուտակումն ու փոխանցումը: Յուրաքանչյուր հանրության լեզվի դարձվածային համակարգը ոչ միայն

լեզվական, այլև պատմամշակութային գանձարանն է: Հիմնականում ստեղծվելով կենդանի, իրադրական խոսքի միջավայրում՝ դարձվածային միավորները կրում են մեծ պատմությունների (հեքիաթ, ավանդազրույց, ասույթ, ասացվածք և այլն) փոքր դրվագներ: Այսպես նրանք կայունանում, իմաստաբանորեն հղկվում և դառնում են բառապաշարի՝ տարբեր երևույթներ, հասկացություններ արտահայտող բառամիջոցներ՝ կազմությամբ առանձնահատուկ, ոճական արտահայտչաձևով:

Ներածություն

Դարձվածային միավորները տվյալ լեզվակիր հանրության ոչ միայն կենսագրության, այլև մշակութային ու արժեքային համակարգերի ճանաչողության անփոխարինելի մեջոցներն են, որոնցով հարուստ է Գորիսի բարբառը: Ցավով պետք է արձանագրենք, որ Սյունիք-Արցախի (Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան) միջբարբառախմբի բարբառներից այսօր իր բնօրրանում մնացել է միայն Գորիսի բարբառը: Վերջինիս ուսումնասիրությունը չի սահմանափակվում Ա. Մարգարյանի «Գորիսի բարբառը» մենագրությամբ՝ կամ որոշ նեղ հարցերի ուսումնասիրությամբ²: Բազմաթիվ հարցեր կան, այդ թվում դարձվածաբանական, որոնք պահանջ ունեն ոչ միայն նորովի մեկնաբանելու, այլև բացահայտելու: Գորիսի բարբառում առկա դարձվածքներին վերաբերող առանձին

1 **Մարգարյան Ա.**, *Գորիսի բարբառը*, Ե., Երևանի համալսարանի հրատ., 1975, էջ 246:

2 Ինչպես, օրինակ, **Քումունց Մ., Ներսիսյան Լ.**, *Սյունիք-Արցախ բարբառային տարածքի ռազմական բնագավառի տերմինները Գորիսի բարբառում*, «Բանբեր» Երևանի Վ. Բյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի, 2017, 1(40), էջ 690-699, **Քումունց Մ.**, *Գորիսի բարբառը հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման համատեքստում*, Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ, միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2022, էջ 253-270 և այլն:

ուսումնասիրություն դեռևս բացակայում է, այնինչ, ճիշտ է նկատված, դարձվածաբանական հետազոտությունները կարևոր են ոչ միայն լեզվաբանական, այլ նաև իմացաբանական առումով, քանի որ դրանք հստակ ցույց են տալիս լեզվի և հասարակության փոխհարաբերությունները³: Հայերենի հնագույն բարբառներից մեկի՝ Գորիսի բարբառի չդիտարկված կամ լրացուցիչ մեկնաբանություններ պահանջող բարբառային բնույթի դարձվածքների ուսումնասիրությունը կարևոր է լեզվաբանական և ընդհանրապես հայագիտական շատ բնագավառների տեսանկյունից, քանի որ դարձվածքի գլխավոր հատկանիշը նրա ազգային բնույթն ու ազգային լեզվամտածողությունն է: Սա կարևորվում է այնքանով, որ ամեն մի դարձվածք առաջին հերթին լեզվամտածողության ու լեզվափիլիսոփայության արդյունք է և որպես հաղորդակցական երևույթ՝ կապված է բազմաթիվ լեզվական և արտալեզվական ասպեկտների հետ՝ տրամաբանական և հոգեբանական, պատմական և փիլիսոփայական⁴:

Ուսումնասիրվող բարբառային դարձվածքները Գորիսի բարբառախոս միջավայրում տարածված, անմիջական խոսքի համն ու հոտը ապահովող բաղադրիչներ են, որոնք արձանագրված չեն բարբառային բառարաններում՝ որպես կենդանի խոսքի մնայուն գոհարներ:

Ուսումնասիրության մեթոդը

³ **Norbekova R.**, Teaching phraseology conducting theory and practice, Mental Enlightenment Scientific-Methodological Journal. 1, 01 (Dec. 2020, 57–65), p. 58.

⁴ **Zerkina N., Kostina N.**, English Phraseology in Teaching: Interrelation of Theory and Practice, Procedia – Social and Behavioral Sciences, Volume 199 (p. 143–148), 2015, p. 144.

Գործիսի բարբառի դարձվածքները քաղել, հավաքել ենք կենդանի խոսքից: Դրանց դարձվածային արժեքը որոշելու համար դիտարկել ենք՝

1. միավորների իմաստաբանական արժեքը կայուն կապակցության համատեքստում:

2. Դարձվածքներ կազմող բառերի բառաքերականական, իմաստաբանական համակցությունը, այսինքն՝ կայուն կապակցությանը բնորոշ բառի (բառային միավորի կամ ոճի) դիրքը և ըմբռնումը խոսքաշարում:

3. Համեմատել ենք հայերենի տարբերակներում տարածված դարձվածային միավորների հետ՝ պարզելու՝

ա. դարձվածք կազմող բառերի և նրանց արտահայտած իմաստների առանձնահատկությունները դարձվածքի շրջանակում (լեզվական կադապարի մեջ):

բ. Դարձվածքների կառուցվածքային և իմաստաբանական արժեքը և բնորոշ լինելը կենդանի-խոսակցական (բարբառային) միջավայրին:

գ. Բարբառային բառարաններում չամրագրված կայուն արտահայտությունների (բառախումբ) կառուցվածքն ու ամրագրված իմաստը Գործիսի բարբառում:

4. Դարձվածքների ձևաբանական արժեքը՝ բայական և անվանական դարձվածային միավորներ, առանձնացրել դրանց իմաստային նշանակությունները, բաղադրիչների տարաբնույթ կազմությունները համեմատության և վերլուծական մեթոդներով:

5. Գործիսի բարբառում և Արցախի բարբառ-խոսվածքներում վկայվող դարձվածային միավորների ընդհանրությունները (համեմատական քննություն):

Դարձվածային միավորների քննություն

Դարձվածային միավորների ձևաբանական արժեքն ընդհանուր առմամբ բխում է նրանց իմաստային, բառաքերականական և գործառական հատկանիշներից:

Ընդհանրապես յուրաքանչյուր լեզվի դարձվածապաշարում գերակշռում են բայական դարձվածքները, որոնց առանցքային բայ բաղադրիչը հանդես է գալիս կա՛մ անդեմ-դերբայական, կա՛մ դիմավոր-եղանակային ձևերով: Առաջին դեպքում բայական այդօրինակ կապակցությունները գործածվում են անվանողական արժեքով, երկրորդ դեպքում հաղորդակցական արժեք են ստանում՝ համատեղելով բայական արժեքն ու հաղորդակցական գործառույթը:

Յուրահատուկ են հետևյալ բայական դարձվածքները: Այսպես՝ **վիրա՞ն մըն շամփուր մէս չինիլ** - գործածվում է «շատ նիհար, հյուծված» նշանակությամբ. «Էս խօսան հաց չի օտում, **վիրա՞ն մըն շամփուր մէս չկա**»⁷: «Ղարաբաղի բարբառի բառարանում» (այսուհետ՝ ՂԲԲ⁸) «նիհար, բարձրահասակ և ձիգ քայլով մարդ» իմաստով կա **շամփուր կօլ տըված** դարձվածային տարբերակը (էջ 565):

Նույն նշանակությամբ, սակայն առավել բացասական երանգով («չարությունից, նախանձից հյուծված, հիվանդ տեսք ունեցող») բարբառում տարածված է **կըռըհա՞քի տա՞ռա՞ծ** դարձվածը. «Էս հինչ ա իլա՞լ էս կընգանը, **կըռըհա՞քի ա՞ տա՞ռա՞լ**»: *Կըռըհյաքի* բացատրվում է «կեռ պոչ ունեցող, կեռ պոչով կարիճ և փխր.

⁵ **Բաղիկյան Խ.**, *Ճամանակակից հայերենի դարձվածային միավորները*, Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, էջ 91-93 (այսուհետև՝ Բաղիկյան 1986):

⁶ Տե՛ս **Մարգարյան Ա.**, *Ճամանակակից հայոց լեզուն*, Ե., ԵՂՀ հրատ., 1993, էջ 325, Բաղիկյան 1986, էջ 161:

⁷ *Դարձվածային միավորների օրինակները բերված են բարբառախոս միջավայրի առօրյա խոսքաշարից:*

⁸ **Մարգարյան Ա.**, *Ղարաբաղի բարբառի բառարան, առաջին հրատ.*, Արցախի պետական համալսարան, Ե., 2013, երկրորդ հրատ., Ե., «Էդիթ պրինտ» հրատ., 2019:

խարդախ, խորամանկ»։ «Կըռքիա՞քի մարթիք շատ կան» (ՂԲԲ, էջ 362)։

Ընդհանրապես մասնագիտական գրականության մեջ դարձվածային տարբերակներ են համարվում այն դարձվածային միավորները, որոնք տարբերվում են միմյանցից այս կամ այն բառով, ձևաբանական կառուցվածքով կամ շարադասությամբ և այլն, բայց չեն տարբերվում դարձվածքի ընդհանուր իմաստով։

Շամփուր բաղադրիչով մեկ այլ դարձված ևս տարածված է Գորիսի բարբառում։ **Շամփուրին քաղել** – «տանջել, նեղել, չարչարել»։ «Սաղ քիշեր քօն չի ինում, ինձ **շամփուրին ա քաղում**»։ ՂԲԲ-ում հանդիպում ենք նույն իմաստով **շամփուրը նի քաշիլ** դարձվածը (էջ 565)։

Մայադ ճո՞ւր տա՞ռնա՞ – «չպտղավորվել, երեխա չունենալ»։ «**Մայադ ճյո՞ւր տա՞ռնա՞**, խե էս խուխիս թակում»։ Պրս., թրք. *māya* թթխմոր բառն է՝ «մակարդ, մերան», «փխբ. 1. խառնակիչ, 2. Դրամագլուխ» (ՂԲԲ, 487)։ Հետաքրքրական է, որ բարբառում այս բաղադրիչով տարածված են հիմնականում դրա փոխաբերական նշանակություններով դարձվածքները՝ *մայան բաթմիշ ինիլ* («ունեցվածքը կորցնել»), *մայա տալ* (մեկին մյուսի դեմ հանել), *մայա տա՞ռնա՞լ* («ունեցվածքի հիմք դառնալ»), *մայա փրռնել* («ունեցվածքի, հարստության հիմք դնել»)։ Իսկ բաղադրիչի առաջնային իմաստով հայտնի է *փորը մայա ինգիլ* («կշտանալ») դարձվածը։

Մյուս դարձվածն է **աջալ-մաջալ տալ** || **չլտալ** – «խոսելու ընթացքում հերթ, ժամանակ տալ || չտալ դիմացինին»։ «**Աջալ-մաջալ չէս տամ**, վեր խօսամ», «**Աջալ-մաջալ տօր**, մէնք ալ խօսանք»։

Դարձվածքի առանցքային բաղադրիչը **մա՞ջա՞լն** || **մըջա՞լն** է՝ արաբ. *macāl* բառը՝ *macāl* «1. տարածք, ասպարեզ, 2. ուժ», որից

9 **Բաղիկյան Խ.**, *Դարձվածային ռճաբանություն*, Ե., ԳԱՄ հրատ., 2000, էջ 81-86։

հայերենի բարբառներում՝ «Ժամանակ, պահ» իմաստներով: ՂԲԲ-ում կա *մըջա՝լ տալ* դարձվածքը՝ «հնարավորություն, հարմար պահ, միջոց ընձեռել» իմաստով (էջ 513): Սակայն մեր կողմից նշվածն ունի կոնկրետ գործածության իմաստ՝ հենց խոսելու ընթացքում «հերթ տալ-չտալը»: Դարձվածքը կազմությամբ կրկնավոր բարդություն է՝ *մա՝ջա՝լ-մա՝ջա՝լ տալ*, փոխազդեցական հնչյունափոխությամբ առաջին բաղադրիչի *մ*-ն ընկել է և դարձել *ա՝ջա՝լ-մա՝ջա՝լ*, քանի որ *ա՝ջա՝լ* բաղադրիչը որևէ իմաստային կապ չունի *ա՝ջա՝լ* (արաբ. *acala* «արագացում»), բարբառային տարածքում «օրհաս, վախճան, կյանքի վերջ, մահ» իմաստների հետ (ՂԲԲ, էջ 64): Այդ բառով գործածվում է *ա՝ջա՝լը ծըրավել* «պատահարից չխուսափել, իր արարքով իր օրհասը մոտեցնել» դարձվածային միավորը: Իսկ *մա՝ջա՝լ* բաղադրիչով առօրյա-խոսակցականում շատ է գործածվում *նեղ մա՝ջա՝լ* արտահայտությունը. «Էս *նեղ մաջալին* էս էր պակասում»:

Հըռչիպը/հըռճիպը կըլխին տալ - «խիստ զայրանալ, վրդովվել»: Ըստ երևույթին՝ դարձվածքը կազմված է **հեռ/հըռ (գրբ. եռ)**-1. «եռալ, եռ գալ, եռք» և 2. «ցալ, կսկիծ, մարմաջ» (ՂԲԲ, էջ 422) և **ճըպի/ճիպի** 1. «աչքերը արագ-արագ թարթել», 2. «ցուլալ, առկայծել» (ՂԲԲ, էջ 471) բառերի բաղադրությամբ՝ նշանակելով «զայրույթից, վրդովմունքից աչքերը ճպճպացնել», իսկ փոխաբերաբար՝ «աչքերը բնից դուրս գալ»:

Յալին վազ տալ - «շահագործել, առիթից օգտվել». «Մարթուն տիրա՝լ են շա՝շի տեղ, **յալին վազ են տամ**», «Մա՝ս չէս հանում, **յալիդ վազ են տամ**»: «Հայոց լեզվի բարբառային բառարանում» նշվում է 1. «ձիու պարանոցի մազափունջ, բաշ», 2. «մազեր» իմաստներով¹⁰:

¹⁰ Հայոց լեզվի բարբառային բառարան, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գլխ. խմբ.՝ Ա. Սարգսյան, 7 հատորով, 2001-2012), հատ. Դ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ե., 2008, էջ 100:

Դարձվածքի իմաստը որոշակիանում է **յալ** բաղադրիչի առկայությամբ, այսինքն՝ «բաշից, վզից բռնած հեծնեղ, քշել», ինչից էլ բխում է դարձվածային իմաստը:

Մըշալին կապել - «խայտառակ անել, վիրավորել»։ «Պա՞ն չասէս, կա՞լու ա ինձ **մըշալին կապի**»։ **Մաշալ(յ)ա** || **մըշալ(յ)ա** (արաբ. **mešale**, պարս. **māšāle**) բառն է, որը նշանակում է «երկար փայտի ծայրին փաթաթած և նավթով՝ բենզինով և այլն թաթախած լաթ, որ վառում են լուսավորելու համար, ջահ» («**Մաշալան** նի յա կըցրալ» (ՂԲԲ, էջ 490))։ Բառիմաստով պայմանավորված՝ խոսակցականում լայն տարածում ունի **դրօշակ սարքիլ** դարձվածային միավորը՝ ավելի մեղմ իմաստային գործածությամբ:

Այդպես և՛ **նյուր շինիլ** դարձվածային միավորը «պատմություն սարքել, կռիվ անել, ծաղրել» իմաստով. «Մի պա՞ն ըսեցի, **նյուր շինեցիր**»։ Ըստ էության՝ ընդհանրություն կա **խոսակցության նյուր** կապակցության հետ, որ տարածում ունի հայերենի տարբերակներում:

Ղընդընդի կա՛լ - «իր ուզածին չհասնել, տեղը չգտնել, իրեն կորցնել»։ «Մին ա իմըս ընիլու վէմ, թող **ղընդընդի կա՛**»։ Միայն ՀԼԲԲ-ում վկայված էր **ղնդնդոց** ձևը՝ 1. «կսկիծ, ցավ», 2. «խոնթխոնթալ, քթի միջից խոսել, խմխմալ» իմաստներով (3, էջ 354):

Քափը քիցիլ - «հոգնել»։ «**Քափըս քիցած** տօն էմ յէկալ, էլ կարում չէմ», «Էդ գործ չի վեր յէս էմ անում, **քափըս քո՛ւցո՛ւմ** էմ, պա՞ն չի տո՛ւս կա՞մ»։ Հատկանշական է, որ բարբառում լայն գործածություն ունեցող **քափ-քրրթնօնք** կապակցության մեջ **քափ** || **քաֆ** (պրս. **kaf** - փրփուր) բաղադրիչը որոշակիորեն պահպանում է իր **փրփրակալած, փրփուր դարձած քրտինք** նշանակությունը։ Ուստի՝ **քափ-քրրթնօնքը քիցիլ** հայտնի դարձվածքում իմաստն էլ է որոշակի՝ **շատ աշխատելուց քրտնել, չարչարվելուց քրտնել, ջուր**

դառնալ: Իսկ մեր նշած դարձվածային միավորում **քրտինք** բաղադրիչի միտումնավոր կրճատումով **քափը քիցիլ**-ը գործածվում է միայն «չարչարվել, շատ աշխատել, ապարդյուն աշխատել» իմաստով:

Ղուռղիբուռղի || դուրդիբուրդի քիցիլ – «խառնաշփոթ, իրարանցում ստեղծել»։ «Յէկու, **ղուռղիբուռին քիցեց**, քինաց»։ Այս բառաձևով օրինակներ բառարաններում չկան։ Հետաքրքրական է, որ ՂԲԲ-ում **դուրդի-դուրդի** (էջ 460) բառահոդվածի տակ նշվում է **դուլլդուլյա** ձևը՝ «իրարանցում, խառնաշփոթություն» իմաստով (էջ 458) և **լաղլաղի**-ն՝ «խառնակչությամբ զբաղվող անձ, խառնակիչ» (էջ 236)։ Կարծում ենք, որ դարձվածքը կրկնությամբ հնչյունափոխված ձևն է՝ **դուրդի-դուրդի > դուրդի-բուրդի > դուրդիբուրդի || դուռղիբուռղի**, ուստի՝ դարձվածային իմաստը բխում է նշված բառաձևերի իմաստներից։ Առավել հնարավոր է, որ դարձվածային կազմության բաղադրիչն առնչություն ունենա **բուլդի և դըլդի** բառերի հետ¹¹:

Առհասարակ դարձվածաբանական գրականության մեջ դերբայ գերադաս անդամով դարձվածքների հարցում տարակարծություններ կան։ Մի դեպքում այդօրինակ բոլոր դարձվածքները համարվում են բայական կապակցություններ¹², մյուս դեպքում՝ բայական դարձվածքների մասնավոր կիրառություններ՝ որոշակի վերապահումով, որ «կան մեծ թվով դերբայական կապակցություններ (մեծ մասամբ հարակատարով), որոնք էլ բուն դերբայական

¹¹ **Քոսմունց Մ.**, -ՏԻ // -ՂԻ ածանցով բարբառային մի քանի բառերի քննություն, Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր, պրակ 2, 2022, էջ 31-40:

¹² **Մարգարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 317:

կապակցություն կառույցն են ներկայացնում. այս կարգի դարձվածքները բայի ձևաբանական արժեք չունեն, այլ գոյականի, վերաբերականների, մակբայի, ածականի»¹³:

Բարբառում ավելի շատ են հանդիպում **անե/իլ** բայի հարադրությամբ կապակցությունները, որոնք բարբառում կայունանում են հիմնականում հարակատարի ձևով:

Դուդրախ ըրած - «որևէ գործում տեղից չշարժվող, անտեղի, պարապ կանգնած»: «Լա՛ մի պան ըրա՛, **դուդրախ ըրած** յեշում ես»:

Բարբառային բառարաններում տրվում է **դուդրուխ** ձևը-
1. «շատ բարձրահասակ ու նիհար մարդ», 2. «ցցված, տնկված» իմաստներով (ՀԼԲԲ, էջ 354), նաև՝ հոմանիշ **դիքյա/դյիքճա** տարբերակը՝ փխբ. «շատ բարձրահասակ և նիհար» իմաստով (ՂԲԲ, էջ 128):

Նույն նշանակությամբ է գործածվում նաև **փըղըվէնդի տա՞ռա՞ծ** դարձվածը. «Տո՞ւրո՞ւր յէկ, **փըղըվէնդի տա՞ռա՞ծ** մէրըդ ես»:

Փէդ և **վէնդ** բառերի բաղադրությունից կազմված բարդություն է, քանի որ կա **փըղանալ** (**փըտանալ** || **փըտանալ**) տարբերակը, որը փխբ. նշանակում է «փայտի նման ցցվել, անշարժ կանգնել» («Հինչ ես **փըղացալ**, տո՞ւրո՞ւր յէկ»):

Բայի հարակատար դերբայը մասնանշում է և՛ բայական գործողության գաղափար, և՛ գործողության կատարման դրություն, վիճակ: Այն արտահայտում է թե՛ գոյականական, թե՛ հատկանշային՝ ածականական և մակբայական նշանակություններ¹⁴:

¹³ Տե՛ս **Բեղիբյան Պ.**, *Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները*, Ե., ՀՊՄԻ, 1990, էջ 201:

¹⁴ **Ավետիսյան Լ.**, *Համեմատություն-դարձվածային միավորները ժամանակակից հայերենում*, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2018, էջ 50:

Տափզի ըրած – «խորամանկ, սուսիկ-փուսիկ». **«Տափզի ըրած** ման ա կա՞մ, տակավը կործերն անում»: Նման իմաստով և կապակցությամբ այլ ձևեր Գորիսի բարբառում հիմնականում չեն հանդիպում:

Ջիլա՞վը կախ ըրած – «ամեն տեղ միասին, հետը»: «Խօխօրցը **ջիլա՞վը կախ ըրած** տանում ա, պո՞ւրո՞ւմ», «Շտեղ քո՞ւնո՞ւմ ա, խօխան **ջիլա՞վը կախ ըրած** ա»: **Ջըլա՞վ || ջիլա՞վ** (պրս. *jelou*, թրք. *çelau*) «սանձ, պախուրց, պարան, կապ» բառն է, որով բաղադրված դարձվածքներ բարբառում շատ կան՝ **ջիլա՞վը ծերքը տալ** (իշխանությունը, իրավունքը մեկին տալ), **ջիլա՞վը ծերքումը պահել**, **ջիլա՞վը ծերքը հըվաքել**, **ջիլա՞վը կլխավը տալ**, **ջիլա՞վը կըտրած** (կապը կտրած), **ջիլա՞վը պաա/ց թողնիլ** և այլն: Մրանք բարբառային բառարաններում վկայված են:

Բայական դարձվածքների լրացյալ բայը, եղանակային ձևերով դրվելով, կարող է ցույց տալ ասույթի բովանդակության հարաբերությունը խոսելու պահի հետ, դրանով դարձվածքը ձեռք է բերում հաղորդակցական արժեք, արտահայտում է արդեն միտք, դատողություն¹⁵:

Կօնդը կախ անիլ - «մի տեղ երկար մնալ, սպասեցնել» նշանակությամբ: «Յեշի չքինա՞ս **կօնդըտ կախ անես**, շո՞ւտ կիկա՞ս»: **Կօնդը** գրաբարյան կունդ, գունդ բառն է, նաև՝ որոշ բույսերի (սոխ, սխտոր) գնդաձև արմատը, կոճղեզ¹⁶: ՂԲԲ-ում կա **կօնդը կախ**- ծղր. «տխուր, ամոթահար» իմաստով (էջ 398): Հետաքրքրական է, որ այս իմաստային նշանակությամբ բարբառում գործածական են ևս **վեռը**

¹⁵ **Բեդիրյան Պ.**, *Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն*, Ե., «Լույս» հրատ., 1973, էջ 185:

¹⁶ Այս մասին կարելի է տեսնել՝ **Քումունց Մ.**, *Սյունիք-Արցախի բարբառային տարածքի մի քանի համանունների ուսումնասիրության շուրջ*, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված Վ. Ա. Քոսյանի ծննդյան 90-ամյակին, Ե., 2017, էջ 172-181:

կախ անիլ, ռեխը կախ անիլ և վենդը կախ անիլ դարձվածքները: Առաջին երկուսը գոեհկաբանական երանգ ունեն, իսկ վերջին դարձվածի չեզոք գործածությունը պայմանավորված է դրա ավելի շատ դրական խոնարհումով կիրառվելով՝ «**Վենդըտ կախ ըրա, կա՛մեմ**»:

Շուխկուբուդուր անիլ - «աղմուկ-աղաղակ, իրարանցում առաջացնել, բարձրաձայն խոսել»: Տարածված դարձվածք չէ, քանի որ խոսակցական լեզվում զիջում է **շուխուր** || **շըխուր անել** ձևին: ՀԼԲԲ-ում տրված է **բուդուր** արմատը, որը գործածվում է կապակցության մեջ՝ **բուդուր-բուդուր տալ**՝ «ջանալ, եռանդով մի բան անել» նշանակությամբ: Իսկ առաջին բաղադրիչը, ըստ երևույթին, կապված է **շուխկ/շըխկ** նմանաձայնության հետ (շխկացնել, շրխկացնել):

Ցա՛քը ըսքըսիլ - «աշնանացանը, վարը սկսել». «Կարում չեմ հըսցնեմ, **ցա՛քը սկսալ ա**»: Կապակցության մեջ **ցաքել** բայն է, որը Ղրբ., Մկս., Մշ., բարբառներում նշանակում է **ցաքանել, տափանել, փխրեցնել** (ՀԼԲԲ, էջ 268):

Բարբառային դարձվածքների մեջ կան նաև այնպիսիները, որոնք ձևական կազմով նույնն են կամ գրեթե նույնը, սակայն առանձնանում են իմաստային մի նոր նշանակությամբ:

Այսպես՝ **դութման փըռնիլ** - «համառություն, կամակորություն անել»: «Էլի **դութմատ փըռնալ ա**, ասում եմ՝ մի՛ ըրա, գործ չօնէս»: ՂԲԲ-ում կա **դութման յըեր կենալ/փըռնել** դարձվածը՝ «ուժեղ գլխացավ» և «խիստ ջղայնանալ» իմաստներով (էջ 129):

Քօւէրը փըռնիլ - «ինչ-որ բան անելու համար տեղը չգտնել, ամեն ինչի դիմել, հիվանդագին ընդունել»: «**Քօւէրը փըռնալ ա, քա՛ց քաղաք**»: Ըստ երևույթին՝ կապված է քոս՝ հիվանդագին, անտանելի քոր առաջացնող հիվանդության անվան հետ, որից հիվանդների

մոտ առաջանում են անհանգստություն, նյարդային խանգարումներ, անքնություն: Այդ իսկ պատճառով դարձվածի իմաստային բովանդակությունն իր մեջ ևս առնում է այդ իմաստային ընդհանրությունները:

Կրողքնին յեր թափիլ - «1. ինչ-որ բան ուտելիս ատամները ցավել, տհաճություն գգալ, 2. մի բանը շատ ասել»: «Էս հինչ էս սարքալ, տնաշեն, **կրողքնիս յեր թափեց**» (**կեռիք** (գրք. կեռիք) մարդու կամ կենդանու ատամ): Բարբառում գործածվում է նաև **յեր տեռնալ**՝ 1. «ուժից, իշխանությունից գրկվել, ծերանալ» և 2. «մի բան ապարդյուն շատ ասել» իմաստներով (ՂԲԲ, էջ 362):

Շօրերը նէստան կէնալ - «քրտնել, հագուստից նեղվել»: «Էսօրի էնքան գործ եմ ըրալ, **շօրերս նէստա յա կըցալ**, մեռնում եմ»: Առանձին գործածական և բառարաններում նշվում է **նըէստա կէնալ**-ը՝ 1. «կպչել, փակչել», 2. «մեկից՝ մի բանից ձեռք չքաշել՝ չհրաժարվել՝ օձիքը բաց չթողնել»: Դարձվածը գործածվում է **պուր չկա՞լ** դարձվածային միավորի հետ միասին, օր.՝ «Խօխան **նըէստա յա կըցալ, պուր չի կա՞մ** մօրը անա» (ՂԲԲ, էջ 555):

Ռա՞հիլը քաշել - «թողնել-հեռանալ, ստիպված գնալ»: «Մի պա՞ն տուր, **ռա՞հիս քաշեմ**, քինա՞մ»: Ըստ երևույթին՝ սա **ռադը քաշիլ/ռադ ինիլ /ռադ իլ** գոեհկաբանական արտահայտության հնչյունափոխված, աղավաղված արտասանությամբ տարբերակն է: Արմատը **ըռադ/ըռադ/ռա՞դ/ռադ** (արաբ. **red'** վանել, մերժել, հետ դարձնել) բառն է (ՂԲԲ, էջ 166):

Նշյալ արմատի հետ է կապվում ևս մեկ արտահայտություն՝ **քինա՞ կըլխաս**: Սա եղանակավորող դարձվածքի արժեք ունեցող կառույց է, քանի որ հատուկ դարձվածային իմաստ չի նշում, այլ արտահայտում է արհամարհական, դժկամական վերաբերմունք: Սրա առաջացումը հավանաբար առնչվում է **կըլխան ռադ անել**

(«ձանձրույթ, տհաճություն և այլն պատճառողին որևէ խնդրով իր մոտից հեռացնել») դարձվածքի՝ կրճատված տարբերակի հետ:

Ղըրի խօսալ – «անտեղի, իզուր խոսել, մեկին վատաբանել, չարախոսել»: **«Ղըրի խօսա միլ**, էն մարթը տէնց պա՞ն չի ասալ»:

Ղըրէ բաղադրիչը հանդիպում է ՀԼԼԲ-ում, որտեղ նշվում է գործածությունը Գորիսի, Ղարաբաղի բարբառներում՝ «մեկի հասցեին, մեկի մասին» բացատրությամբ (ՀԼԲԲ, 3, 352):

Դինջից հանիլ – «ձանձրալի, քնեցնող վիճակից դուրս գալ».
«Լա՞վ ա խուսացիր, **դինջից հընէցիր**, թա՞շնա՞ քօն ի նիլու» (բարբառներում տարածված **դինջ** «հանգիստ, հեշտ, դյուրին» բառն է:

Յէմը տեղը (ինիլ) -1. «չադանալ, կամվածքը լավացնել, 2. գործերը հաջող ընթանալ, լավ պաշտոն զբաղեցնել».
«Լա՞ պաշտօնը փոխում էն, դո՞ւզվո՞ւմ ա, չըդանում. **յէմը տեղնն ա**»: Կազմված է թրք. **yem** (ուտելիք, կեր) բառից: Բարբառում այդ իմաստով պակաս տարածում չունի նաև ռուսերեն փոխառությամբ **կորմը տեղն ա** դարձվածքը: Վերջիննս, սակայն, ավելի գործածական է ուղիղ իմաստով. «Խոզերի **կորմը տեղնն ա**, լա՞վ աճում էն»:

Պ. Բեդիրյանը ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցություններին նվիրված իր աշխատանքում առանձնահատուկ ուշադրություն է հատկացնում դարձվածային արտահայտություններին: Նա նկատում է, որ դրանք կայուն համեմատություններ են և «պարզ ցույց են տալիս, թե ինչպես են սովորական բանաձևումները ժամանակի ընթացքում դառնում դարձվածային միավորներ, պատրաստի վերարտադրելի կապակցություններ»¹⁷:

¹⁷ Բաղիկյան Խ., 1986, էջ 49-51:

Բարբառային անվանական դարձվածային միավորներն ինքնատիպ են հատկապես այս կամ այն մարդուն դիպուկ բնութագրելու առումով: Ընդհանրապես դարձվածքներով ավելի ցայտուն, վառ ու պատկերավոր են արտահայտվում մարդու ներաշխարհը, հոգեբանական վիճակներն ու խառնվածքը:

Ցա՞քի փօշ - «կոպիտ, գոեհիկ մարդ»: «Ա՛, **ցա՞քի փօշ**, հերիք չի եղ խուխին կըտկօտէս»:

ՂԲԲ-ում **ցա՞ք** բառահոդվածի տակ նշվում է «փշոտ թուփ, որով ցանկապատ են քաշում, առանձին փխբ. գործածությամբ՝ կոշտ՝ կոպիտ բնավորությամբ մարդ» («էն էլ հօ ըսկէտուր չի, **ցա՞ք** ա, **ցա՞ք**»): Սյունիք-Արցախի բարբառային տարածքում նշվում է նաև **ցա՞քո՛ւ փօշ** կապակցությունը հենց բույս նշանակությամբ:

Հետաքրքրական գործածությունն ու կազմություն ունի նաև **դիք-դըռաբա** դարձվածքը. «**Դիք-դըռաբա** մարթ էս, մըն նախշուն պա՞ն չէս ասիլ»: Կազմության առաջին բաղադրիչը թրք. **dik** բառն է՝ «գառիվեր, վեր ձգված, ցցված, բարձունք» նշանակությամբ: Երկրորդ բաղադրիչը բարբառային բառարաններում առանձին գործածություն չունի: Ըստ երևույթին՝ կապված է **դըռի** «լրիվ չեփած, փխբ. աշխույժ, կայտառ ծերերի մասին» բառի հետ (հմմտ.՝ **դըռա՛** Մշ. քուրդ կամ թուրք կին, Վն. քրդի կին):

Դուդուռը էրգա՞ն - «տգեղ դեմք ունեցող, ոչ դուրեկան մարդ». «Հա՛, **դուդուռը էրգա՞ն**, կէշ մարթ ա»: Արմատը **դուդա/դուդու** (թրք. **dudak**) բառն է՝ 1. «անասունների դունչ՝ քիթ-բերան» և 2. «անարգական երանգով՝ մարդու քիթ-բերան»:

Ամփոփում

Գործիսի բարբառում տարածված և առօրյա հաղորդակցության մերանը կազմող դարձվածքները աշխարհաճանաչողության և լեզվամշակույթի պահպանման կարևորագույն պատառիկներն են,

որոնց անտեսումը, մոռացումը և այլ համարժեքներով փոխարինումը կհանգեցնի բարբառախոս հանրության կեցության և այդ կենսակերպով ձևավորված արժեհամակարգի խաթարմանը:

Հետաքրքրական է, որ բայական դարձվածքների անվանական բաղադրիչը, կազմված լինելով ծագմամբ փոխառյալ բառերից, յուրահատուկ իմաստ է ստացել դարձվածքի կազմում. այսկերպ՝ բարբառախոս հանրությունը կարողացել է յուրացնել հասկացությունը, վերաիմաստավորել, դարձնել բարբառային՝ հարստացնելով բարբառային բառապաշարի կազմը, արտահայտման ձևերի բազմազանությունը ոճական (ոճավորման) յուրահատուկ նպատակադրումներով:

Margaryan I. - Phraseological units of the Goris dialect that are not found in dialect dictionaries.- The studied dialect phraseological units are interesting structures that are widespread in the dialect environment of Goris and are not included in dialect dictionaries. Among them, nominal forms are inferior in number to verbal phrases. The most common phraseological units are "to make" a verb, which have stabilized into a productive past form and express unique semantic nuances. Studying the material with the help of comparative analysis allowed us to compare and analyze the commonality of expressions found in the Goris and Artsakh dialects, at the same time emphasizing the unique semantic and formal manifestations of Goris expressions fixed in a separate dialect. We have extracted and collected phraseological units of the Goris dialect from live speech, we examined their understanding and assimilation in speech. Basically, we studied the external and internal appearance of a person, character traits and common features, phraseological units characterizing everyday realities.

Маргарян И. - Фразеологизмы горисского диалекта, которых нет в диалектных словарях.- Изучаемые диалектные фразеологизмы являются интересными структурами, широко распространенными в диалектной среде Гориса и не вошедшими в диалектные словари. Среди них именные формы уступают по количеству глагольным фразам. Наиболее распространены фразеологизмы "делать" глаголом, которые стабилизировались на результативное прошедшее форме и выражают уникальные семантические нюансы. Изучение материала с помощью сравнительного анализа позволило сопоставить и проанализировать общность выражений, встречающихся в Горисском и Арцахском диалектах, в то же время подчеркивая уникальные смысловые и формальные проявления горисских выражений, закрепленных на отдельном диалекте. Мы извлекли, собрали фразеологизмы Горисского диалекта из живой речи, рассмотрели их понимание и усвоение в речи. В основном мы изучили внешний и внутренний облик человека, черты характера и общие черты, фразеологические единицы, характеризующие повседневные реалии.